ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

18 հունիսի 2010թ. N- Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 31-րդ գլխի, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ կետի և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 28-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները, հաշվի առնելով քաղաքացի Վրեժ Մարկոսյանի առաջարկը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող Երևանի Ա. Սարգսյան 8 հասցեում գտնվող՝ 2010 թվականի հունիսի 3-ի դրությամբ 4.300.000 ՀՀ դրամ գնահատված շուկայական արժեքով՝ 637,5 քառ. մետր մակերեսով չորրորդ աստիճանի վնասվածությամբ շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ 0,047508 հա. հողատարածքն ուղղակի վաճառքի ձևով օտարել Հայաստանի Հանրապետության քաղաքացի Վրեժ Մարկոսյանին (անձնագիր՝ ԱԿ 0363378 տրված 25.08.2009թ. 001 կողմից):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<< ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 309-Ա որոշմամբ Երևան քաղաքի սեփականություն համարվող Երևանի Ա. Սարգսյան 8 հասցեում գտնվող՝ 637,5 քառ. մետր մակերեսով չորրորդ աստիճանի վնասվածությամբ շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ 0,047508 հա. հողատարածքը անհատույց օտարվել է Երևան քաղաքին:

Երևանի քաղաքապետարան է դիմել քաղաքացի Վրեժ Մարկոսյանը և խնդրել վերը նշված գույքն օտարել իրեն Երևանի Ա. Սարգսյան 8 հասցեում հասարակական-բարեգործական գործունեություն ծավալելու նպատակով:

Համաձայն լիցենզավորված կազմակերպության՝ <<Տիգրիս>> ՍՊԸ-ի, 03.06.2010թ. շուկայական արժեքի գնահատման հաշվետվության՝ Երևանի Ա. Սարգսյան 8 հասցեում գտնվող՝ 637,5 քառ. մետր մակերեսով չորրորդ աստիճանի վնասվածությամբ շենքի և դրա սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ 0,047508 հա հողատարածքի գնահատված արժեքը կազմում է 4.300.000 (չորս միլիոն երեք հարյուր հազար) դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին>> որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ